



ԼՂՀ դատական իշխանություն

**ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ  
ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր**

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



**Օրպեսափի երկիրը կարողանա ապրել,  
հարկավոր է, որ իրավունքներն ապրեն  
Աղամ Միջկեչ**

Մարդկության զարգացման պատմությունը վկայում է, որ մարդու կողմից իրավունքների և ազատությունների ձեռքբերումը և դրանց անվանացանկի ընդլայնումը պետության և անհատի միջև միշտ էլ սուր բախումների քատերաբեմ են եղել: Դա բացատրվում է նրանով, որ պետությունն իր բաղադրիչներին երեք կամավոր կերպով սոցիալական բարիքներ չի տվել: Միջազգային փաստարդերում, սահմանադրություններում և օրենսդրություններում աճրագրված մարդու և քաղաքացու իրավունքները մարդկության կողմից տառապանքով են ձեռք բերվել և նվաճվել: Պատմությունը ցույց է տալիս, որ այդ ճակատամարտը դեռևս չի ավարտվել, և յուրաքանչյուր նոր սերունդ պետք է պայքարի՝ տեր կանգնելու իր իրավունքներին: Անձի իրավունքները և ազատությունները լրիվ չափով կարող են ապահովել և պաշտպանվել միայն ինքնիշխան, ժողովրդական դատավորության մեջ:

Իրավական և սոցիալական պետության մեջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը, երկիրը հոչակելով ժողովրդական և իրավական պետություն, մարդու իիմնական իրավունքներն ու ազատությունները ճանաչում է որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք: ԼՂՀ Սահմանադրությունը պետության վրա պարտականություն է դրել՝ ապահովել մարդու և քաղաքացու իիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրածանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրությամբ աճրագրված վերոնշյալ դրույցները մատնանշում են, որ ԼՂՀ-ն ոչ միայն ճանաչում է մարդու իրավունքները և ազատությունները, այլև այդ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը համարում է պետության իիմնական գործառույթներից մենք, ինչը հնարավորություն է տալիս Լեռնային Ղարաբաղը բնորոշել որպես ժողովրդական և իրավական պետություն:

ԼՂՀ Սահմանադրությունը նախատեսում է յուրաքանչյուր անձի՝ իրավունքների և ազատությունների օրենքով չարգելված քոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Այդ միջոցների թվին պետք է դասել՝ իրավունքների պաշտպանությունը հասարակական կազմակերպությունների կողմից, իրավունքների ինքնապաշտպանությունը /անհրաժեշտ պաշտպանություն և ծայրահետ անհրաժեշտ ստուգյուն/, իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և նարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելը, նշված խնդրով օրենքով սահմանված հիմքերով ու կար-



գով մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալը, օրենսդրությանը համապատասխան վարչական կամ դատական կամ քաղաքացու առաջարկության, դիմումի կամ բողոքի քննարկման արդյունքում պաշտոնատար անձանց կողմից ընդունված կամ կատարված գործողությունները /անգրծությունը/ բողոքարկելը:

Մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է: Դա պայմանավորված է նրանով, որ, նախ, իրավունքների դատական պաշտպանությունն ամրագրված է սահմանադրախրավական նորմերում և նոյն նորմերն ել ազդարարում են, որ դատարաններն անկախ են և ներքարկում են միայն օրենքին, այսինքն, դատարանները գերատեսչական շահերով որևէ այլ մարմնի հետ կապված չեն:

Մարդու իրավունքների դատական պաշտպանությունն առաջին հերթին կարելովում է միջազգային ֆաստարդերով: Սահմանավորեն, Մարդու իրավունքների համբողիանուր հոչակագրի 8-րդ հոդվածն արձանագրում է, որ «Յուրաքանչյուր որ իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական օրենքները ուժանահարվելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»<sup>1</sup>: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան, ինչպես նաև նրա լրացուցիչ արձանագրությունները ոչ միայն սահմանել են մարդու իրավունքները և ազատությունները, այլև այդ իրավունքների պատշաճ իրականացման համար ստեղծել են արդյունավետ գործող մեխանիզմներ<sup>2</sup>:

ԼՂՀ օրենսդրությամբ ամրագրված բազմիվ նորմեր համահումչ են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ֆաստարդերին: ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը նշում է, որ յուրաքանչյուր որ ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրավարա-

կային քննության իրավունք: Սահմանադրախրավական այս նորմերն իրենց ամրագրումն են գտել ԼՂՀ դատական օրենսգրքում, իսկ անձի դատարան դիմելու իրավունքը նախատեսված է ԼՂՀ քաղաքացիական, քրեական, վարչական դատավարության օրենսգրքերով և «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքով: Ի դեպ, ԼՂՀ քաղաքացիների և ֆիզիկական անձան՝ դատարան դիմելու իրավական ռեժիմը տարածվում է նաև օտարերկյա ֆիզիկական և իրավաբանական, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձան վրա:

ԼՂՀ-ում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնա վրա, դրանով իսկ դատական իշխանության վրա առաքելություն է դրվում պաշտպաններու անհատի իրավունքները և ազատությունները, սոցիալական բախումների իրավական լուծումների ժամանակակից հանդես գալու անկախ և անաշխատ իրավարարի դերում: Անհատի իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության այս մասը, որն իրականացվում է դատական իշխանության կողմից, ստացել է «իրավունքի դատական պաշտպանություն» անվանումը:

Պետք է նշել, որ «իրավունքի պաշտպանության եղանակը» և «իրավունքի պաշտպանության ձևը» եզրույթները տարբեր հասկացություններ են: Եթե առաջինը նյութական բնույթի կատեգորիա է, ապա երկրորդը՝ դատավարական: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներն ամրագրված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով, որոնց թվին են դասվում իրավունքը ճանաչելը, մինչև իրավունքի խախտումը եղած դրույթումը վերականգնելը, իրավունքը խախտող կամ նրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխինը, առողջն գործարքի անվավերության հետևանքները կիրառելը, վիճակարույց գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը, պետական կամ տեղական ինքնակառավարման նարմնի՝ օրենքին հակասող ակտը չկիրառելը, իրավունքի ինքնապաշտպանությունը, պարտականությունը բնեղենով կատարելուն հարկադիր վճարութելը, վճարութելը, տուժանը



## ԼՂՀ դատական իշխանություն

բռնագանձելը, իրավահարաբերությունը դադարեցնելը կամ փոփոխելը և օրենքով նախատեսված այլ եղանակները:

Սեր երկրում դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության միջոցով: Այդ դատավարություններին համապատասխան՝ անհատի իրավունքները սահմանադրական դատավարության ձևով պաշտպանում է ԼՂՀ Գերազույն դատարանը, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության ձևերով՝ ԼՂՀ դատարանները: Ընդ որում, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության ձևերով անհատի դատական պաշտպանության իրավունքը կարող է անցնել մի շարք փոլերով՝ վարույթ առաջին ատյանի, վերաբերնիշ և Գերազույն դատարաններում, դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը, բժշկական բնույթի հարկադրական միջոցները կիրառելու վարույթը, հասուն վարույթները և այլն: Դատավարության յուրաքանչյուր ձև և յուրաքանչյուր փուլ ունի իր յուրահատուկ գործառույթները:

Դատական կարգով իրավունքների պաշտպանության չորս ձևերից ամենամասշտարակինը քաղաքացիական դատավարությունն է: Շուկայական հարաբերությունների և օտարերկրյա ներդրումների գարգամանը գործներաց ու սպառողական ծառայությունների աճի հետ կապված, դատարան դիմողները տարեցտարի մեծ թիվ են կազմելու: Այսինքն, եթե 2013 թվականի 9 ամսվա ընթացքում իրենց խախտված իրավունքների վերականգնման հայցերով ԼՂՀ ընթիանոր իրավասուրյան առաջին ատյանի դատարան դիմել է 1883 քաղաքացի, ապա 2014 թվականի 9 ամսվա ընթացքում՝ 1921 հոգի<sup>3</sup>: Դատավարության այս ձևում անհատն իր իրավունքները կարող է իրացնել միայն քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված մի շարք պայմանների առկայության դեպքում: Եվ եթե քաղաքացիական դատավարությունում, որպես կանոն, գործի հարուցման նախաձեռնողը հայցվորն է լինում, այսինքն՝ այն անձը, ով իր խախտված կամ վիճարկվող իրավունքների վերաբերյալ դատավարական օրենքով սահմանված կարգով դատարանից պաշտպանություն է խնդրում, ապա դատարան դիմողը պետք է օժտված լի-

նի դատավարական իրավունակությամբ, միշտ որոշի գործի ընդդատությունը, հայցադրությունը կազմված լինի պատշաճ ձևով և պետական տորթի գործարք վճարած լինի:

Քաղաքացիական դատավարության հայցային վարույթում պատասխանողը և գործով մասնակցող մյուս անձներն ևս օժտված են լինում հայցվորին համահավասար դատական պաշտպանությամբ, քանի որ հայցվորի պահանջն անհիմն լինելու դեպքում դատարանը պարտավոր է մերժել հայցը՝ դրանով իսկ պաշտպանելով պատասխանողի՝ անհիմն կերպով վիճարկվող իրավունքները<sup>4</sup>:

Քաղաքացիական դատավարության տարատեսակներից մեկն էլ հասուն կարույրի գործերն են, որտեղ բացակայում է իրավունքի վերաբերյալ վեճը: Հասուն կարույրում դատական պաշտպանության առարկա է հանդիսանում ոչ թե սուբյեկտիվ իրավունքը, այլ օրենքով պաշտպանվող դիմողի շահը: Այդ շահը կայանում է փաստերի հաստատման մեջ, որի հետ օրենքը կապված է իրավահարաբերությունների ծագումը, փոփոխությունը:

Դատական պաշտպանությունը, որպես սուբյեկտիվ իրավունք, պատկանում է ոչ միայն ֆիզիկական, այլև՝ իրավաբանական անձանց, քանի որ վերջիններս հանդիսանում են գալիք որպես ֆիզիկական անձանց միավորներ: Այդ առումով ԼՂՀ Սահմանադրությունը շեշտում է, որ երկրի Հիմնական օրենքում ամրագված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով որ այդ իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրենց եւրյամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում իրավունակություն կարող են ունենալ դատարան դիմել ու իրենց պահանջների բավարարում ստանալ նաև իրավաբանական անձի կարգվիճակ չունեցող կազմակերպությունները:

Քաղաքացիները դատարանում իրենց գործերը կարող են փառել անձանք կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը գործին նրան չի գրկու գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից:

Անհատի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության ձևերի շարքում հասուն տեղ է գրադեցնում քենա-



կան դատավարությունը: Դատավարության այս ծևում արդարադատությունն ավելի սուր է դիմում դատավարության մասնակիցների շահերին: Հանցագործությամբ պատճառված վնասը միշտ էլ շոշափում է տուժողի իրավունքները և ազատությունները: Ոչ պակաս կարևոր հանգանակը է հանդիսանում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի շահերը: Եվ պատահական չէ, որ ԼՂՀ Սահմանադրությունը հատուկ հոդվածներով անդրադարձել է տուժողի և մեղադրյալի իրավունքներին, իսկ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքն արձանագրել է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ապահովելու համար՝ անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության հնքնիրավ գործողություններից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ: Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավիր են ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի իրենց գործունեության արյունքում՝ քրեական օրենսգրքով չրոյլատրված արարք կատարած յուրաքանչյուր որ բացահայտվի և օրենսդրությանք սահմանված կարգով պատասխանատվության շենքարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ որ անօրինական կամ առանց անհրաժեշտության շենքարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Տուժողը, ում քրեական օրենսգրքով չրոյլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարյական, ֆիզիկական և գոյրային վնաս, քրեական դատավարությունում հանդիս է զայխ հատուկ կարգավիճակով: Տուժողին պատճառված վնասը հասուցվում է սահմանված կարգով: Օրենսդրությունը սահմանել է այն քրեական գործերի շրջանակը, որոնք հարուցվում են տուժողի բոլորի հիման վրա, այսինքն, եթե տուժողն իր խախտված իրավունքների վերաբերյալ անմիջապես դիմում է դատարան՝ դրանցելով նախաքննության փուլը:

ԼՂՀ Սահմանադրության 46-50-րդ հոդվածներն անմիջականորեն վերաբերում են մեղադրյալի պաշտպանության իրավունքին: Այդ առումով, մեղադրյալի դատական պաշտպանության իրավունքը յուրահասություն է և էակա-

նորեն տարբերվում է դատական պաշտպանության մյուս ձևերից: Այստեղ խոսք է գնում խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման մասին, որտեղ մեղադրյալը պաշտպանվում է մեղադրանքից և դրա հետ կապված նրան սպառնացող պատժից: Քանի դեռ մեղադրյալի մեղավորությունն օրենքով սահմանված կարգով չի ապացուցված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա անմեղության կանխավարկածի ուժով մեղադրվողը համարվում է անմեղ:

Քրեական դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանությունը ոչ միայն դատարանի, այլև բոլոր իրավապահ մարմինների պարտականությունն է: Դա պարտավորեցնում է ԼՂՀ Սահմանադրությունը, որում պաշտպանված են քաղաքացիների գույքային «Սեփականությունից կարող է գրելի միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում» -Սահմանադրության 33-րդ հոդված/ և ոչ գույքային /«Ոչ որ պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձակիր ազգականների վերաբերյալ» -Սահմանադրության 49-րդ հոդված/ իրավունքները: Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Այլ կերպ ասած, քրեական դատավարությունում անձի դատական պաշտպանության իրավունքը տարածվում է նաև մինչդատական վարույթի վրա:

Վարչական դատավարությունը քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության նոր ձև է, որը մեր հանրապետությունում արմատավորվեց 2009 թվականի փետրվարի 10-ից, եթե ուժի մեջ մտավ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրքը: Մինչ այդ վարչական կարգով քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում էր միայն օրենքով նախատեսված դեպքերում: Դատավարության այս ձևի ժամանակ դատարանը քննում է բնակչության /քաղաքացիների և իրավաբանական անձինք/ և հանրային իշխանության մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց միջև ծագած վեճերը: Այդ կապակցությամբ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրը սահմանում է պետական և տեղական ինքնականավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ու նորմատիվիկ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրա-



## LՂՀ դատական իշխանություն

Վարանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը LՂՀ դատարաններում։ Քաղի այդ, յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավական անձ վարչական դատավարության կարգով կարող է դիմել դատարան՝ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ LՂՀ Սահմանադրությանը համապատասխանությունը, LՂՀ նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, LՂՀ կառավարության, LՂՀ վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի դեկազրի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, LՂՀ Սահմանադրությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են LՂՀ Սահմանադրության 2-րդ գիտում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազտություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև LՂՀ օրենքներում ամրագրված իր իրավունքները։

Սահմանադրական դատավարությունը, որպես արդարադատության իրականացման ձև, մեր հանրապետությունում սկսեց գործել LՂՀ Սահմանադրության ընդունումից հետո։ Մայր օրենքը նշեց, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է LՂՀ Գերագոյն դատարանը և սահմանեց այն սուբյեկտների շրջանակը, ովքեր օրենքով սահմանված կարգով կարող են դիմել LՂՀ Գերագոյն դատարան։ Ի թիվս այլոց, այդ իրավունքը վերապահվեց նաև յուրաքանչյուր անձի՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմանք կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը։ LՂՀ Գերագոյն դատարանում անհատական դիմումների ներկայացման ժամկետները և դրանց ըննության կարգը սահմանված են «Սահմանադրական դատավարության մասին» LՂՀ օրենքով, որի հիման վրա LՂՀ Գերագոյն դատարանի 2009թ. հունիսի 28-ի աշ-

խատակարգային որոշմամբ ընդունվեց LՂՀ Գերագոյն դատարանի սահմանադրական արդարադատություն իրականացնելու կանոնակարգը<sup>5</sup>։ Փաստորեն, 2009թ. հունիսի վերջից սկսեց գործել LՂՀ Գերագոյն դատարանի սահմանադրական ատյանը, որի ստեղծման պահից առաջար սահմանադրական արդարադատության հարցերով LՂՀ Գերագոյն դատարան դիմել է 8 քաղաքացի<sup>6</sup>։ Քաղաքացու՝ սահմանադրական արդարադատության հարցերով դատարան դիմելու ինստիտուտը, ոչ միայն խախտված իրավունքները վերականգնելու, այլև պետական իշխանության իրավանացմանը նաևնակցելու յուրահատուկ միջոց է, քանի որ քաղաքացու հարցի դրական լուծման դեպքում վերջնական արդյունքն արտացոլվում է օրենսդրության մեջ<sup>7</sup>։

Հարկ է նշել, որ LՂՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու որոշ իրավունքները և ազատությունները օրենքով սահմանված կարգով կարող են ժամանակավորապես սահմանափակվել ուղղմանակ կամ արտակարգ դրույթան ժամանակ, կամ ել եթե դա պիտանի, անհրաժեշտ ու համարժեք է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանան, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու քարի համբավի պաշտպանության համար։

Քաղաքացու ցանկացած իրավունք անհմատ է, եթե տվյալ պետության Հիմնական օրենքով և օրենսդրությամբ ամրագրված չեն այն իրավունքների պաշտպանության արդյունավետ երաշխիքները և իրականացման մեխանիզմները /նշված հարցերը մեր հոդվածի ըննարկման մեջ չեն մտնում/։ Հակառակ դեպքում, իրավունքը վերածվում է հոչակարային հայտարարության։ Այսուղ տեղին է հիշել Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հոչակարի այն դրույթը, որ «Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ սպահովված է իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրությունը»։

Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը կարգավորվում են ոչ միայն ներպետական, այլև միջազգային իրավունքի նորմերով։ Քա-



դարձացու՝ միջազգային մարմններին դիմելու իրավունքը ծագում է միայն այն դեպքում, եթե սպառված են լինում իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներում իր ուրույն և առաջատար դերն ունի 1959թ. Ֆրանչայի Ստրափորդ քաղաքում հիմնված մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Եվրադատարանի հիմքում ընկած են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի մասին նորմերը, որոնք 1950թ. ընդունվել են Եվրոպայի խորհրդի կողմից /կյանքի իրավունք, խոշտանգումների արգելում, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում, արդար դատարբնության իրավունք, պատիժի՝ քացառապես օրենքի հիման վրա և այլն/: ԼՂՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի հնարավորություն է ընձեռում իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմններին, բայց ԼՂՀ միջազգային համբության կողմից միջազգայնորեն շճանաչված լինելու և նրա կողմից միջազգային մարմններին, կազմակերպություններին և համաձայնագրերին, մասնավորապես, Եվրոխորհրդի, մարդու իրավունքների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային միացած չլինելու պարագայում, ԼՂՀ քաղաքացիները գրկված են Եվրոպատարան դիմելու իրավունքից:

Ինչպես վկայում է պրակտիկան, շատ պետություններ, չնայած այն փաստին, որ դեռևս չեն միացել այս կամ այն կարևորագույն միջազգային իրավական փաստարդին, ճգույն են իրենց ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել դրան: Այս առումով, չճանաչված պետությունների միավորմանի հայտարարությունն այն մասին, որ իրենք պատրաստ են անշեղորեն և առանց որևէ նախապայմանի կատարել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը երաշխավորող, այդ բվում՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը նախատեսում միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների պահանջմանը, զգալիորեն կնպաստի նրանց նկատմամբ վտահության պաշարի ավելացմանը<sup>9</sup>:

Նման օրինակ կա, եթե բոլորովին վերջերս՝

ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. հոկտեմբերի 29-ին ընդունված և ԼՂՀ նախագահի կողմից 2014թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված ՀՕ-37-ն օրենքով վավերացվեց 1954թ. դեկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված Եվրոպական մշակութային կոնվենցիան:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է մարդու կարևորագույն իրավունքներից մեկը՝ արդարացի դատական քննության իրավունքի իրականացման երաշխիքները: Այդ երաշխիքները և դատական իշխանության գործունեության հիմնական սկզբունքները նախատեսված են ԼՂՀ Սահմանադրությամբ: Այստեղ ԼՂՀ դատարանները լուրջ անելիքներ ունեն՝ օրինական և հիմնափորված դատական ակտերի կայացման տեսանկյունից, քանի որ իրավարարակված օրինական ուժի մեջ մտած ցանկացած դատական որոշում դառնում է հասարակության իրավական մտքի անբաժան մասը:

1. Մարդու իրավունքների համբականուր հասկագիր, 10 դեկտեմբերի, 1948թ.:

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 4 նոյեմբերի, 1950թ.:

3. Տվյալները վերցված են ԼՂՀ դատական դիպարամենտի պրակտիկայի ամփոփման քաժմից: 4. Գրգումանյան, Քաղաքացիական դատականությունների պահպանությունը դատական պաշտպանության իրավունքի որոշ հարցերի մասին, «ՀՀ դատական իշխանություն» գիրամերուդական ամսագիր, N 4/112, 2008թ., էջ 30:

5. Ներկայուն գործող՝ ԼՂՀ Գերազույն դատական պահպանադրական արդարադատությունն իրականացնելու կանոնադրամ ընդունվել է ԼՂՀ Գերազույն դատարանի 2013թ. սեպտեմբերի 25-ի աշխակարգային հայուսությունում՝ ԳԿԱՌ-11 որոշմամբ:

6. Տվյալները վերցված են ԼՂՀ Գերազույն դատարանի գործադրությանից:

7. Մարդու և քաղաքացու իրավունքների քանակական հոչակագիր, 26 օգոստոսի, 1789թ., հոդված 16:

8. Թեզեւ 5.С., Конституция, правовое государство, конституционный суд – Закон и право, ЮНИТА, 1997г., Москва, стр. 93:

9. Վ.Հովհաննիսիս, Միջազգային իրավունքը և չճանաչված պետություններում մարդու քրծապահութական իրավական իրավունքների երաշխավորման հիմնախնդիրը, «ԼՂՀ դատական իշխանություն» իրավական տեղեկապահական – վերլուծական հանդես, N 2, 2011թ., էջ 19: